ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- դեկտեմբերի 2021 թվականի № Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-Ի №178Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 5-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության սակագնային մարժայի հաշվարկում ներառվող էլեկտրաէներգիայի թույլատրելի կորուստների մեծությունները սահմանելու մասին» №178Ա՝

   1) որոշման վերնագրում «հաշվարկում» բառը փոխարինել «և Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության սակագնի հաշվարկներում» բառերով.

   2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

   3) որոշումը լրացնել նոր 1.1 ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

   «1.1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության սակագնի հաշվարկում ներառվող էլեկտրաէներգիայի թույլատրելի կորուստի մեծությունը սահմանել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված էլեկտրաէներգետիկական շուկայի կանոնների պահանջներին

համապատասխան հաղորդման ցանց մուտք գործող էլեկտրաէներգիայի նկատմամբ՝ 2022 թվականի փետրվարի 1-ից՝ 1,59 տոկոս:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերություններին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
դեկտեմբերի 2021թ.